ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/2413-20 առ "15" 12 2020թ.

Ձեր №_____ առ "___" _____ 2020թ.

«Բագրատիոն Կիրակոսյան» ԱՁ-ի
տնօրեն՝ պրն. Բ. Կիրակոսյանին
E-mail: qaramshak@gmail.com

[№01/259 առ 01.09.2020թ. պայմանագրի
միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի պարոն Կիրակոսյան

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար Գործիքներ և գործիքային հատուկ հարմարանքներ (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ հուլիսի 21-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-96/20» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 27, 29, 43, 60 և 61-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ԲԱԳՐԱՏԻՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ» ԱՁ -ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև 2020թ. սեպտեմբերի 1-ին կնքվել է թիվ 01/259 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 770000 (յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 43-րդ չափաբաժնով սահմանված 3 հատ մանեկապտտիչ օդաճնշականը, որի ընդհանուր գինը կազմում է 330000 (երեք հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ, «ԲԱԳՐԱՏԻՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ» ԱՁ -ի կողմից չի մատակարավել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:

- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:
  Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1 այն է, գնորդը իրավունք ունի՝
- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝
  բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «ԲԱԳՐԱՏԻՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ»ԱՁ-ի հետ 2020թ. սեպտեմբերի 1-ին կնքած թիվ 01/259 պայմանագիրը 43-րդ չափաբաժնի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքի մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60